ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1 ☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____» _____ 2025թ.

ՀԱՍՑԵ՝ ԱՐԱՐԱՏ,0814,ՂՈՒԿԱՍԱՎԱՆ 16 Փ.,29,
ՄԱՍԻՍԻ ՇՐՋԱՆ, ԳՅՈՒՂ ՂՈՒԿԱՍԱՎԱՆ
ԲՆԱԿԻՉ՝ ՍՈՆԱ ՌՈՒԲԵՆՅԱՆԻՆ

Հարգելի Սոնա Ռուբենյան.

12.05.2025թ. Ձեր հարցմանն ի պատասխան ներկայացնում եմ հետևյալը.

1. 2024թ. մայիսի 25-26-ը տեղի ունեցած ջրհեղեղից Ալավերդի համայնքում տարբեր պատճառներով տուժել է շուրջ 650 ընտանիք, տարհանվել՝ թվով 598 մարդ:

2. Ահռելի վնաս էր հասցվել ենթակառուցվածքներին: Վնասվել էր երկաթգիծը, ճանապարհները, որոշ հատվածներում ամբողջությամբ փլուզում էր գրանցվել: Արտաքին աշխարհից կտրված էին բազմաթիվ ընտանիքներ, գազամատակարարումից, ջրամատակարարումից և էլեկտրամատակարարումից նույնպես շատ ընտանիքներ զրկված էին: Ալավերդի համայնքում վնասվել էր հետիոտնային և ավտոմոբիլային կամուրջներ և կամրջակներ, որոշ տեղամասերում ամբողջությամբ փլուզվել էին: Մասնակի կամ ամբողջովին վնասվել էին անհատական տներ և բնակարաններ, տուժել՝ տնտեսվարողներ: Վնասվել էին նաև տրանսպորտային միջոցներ: Զգալի վնաս էր հասցվել նաև գյուղատնտեսությանը, շրջակա միջավայրին:

3. Աղետի առաջին իսկ օրերին կառավարությունը Լոռու մարզին հատկացրել էր գումար՝ առաջին անհրաժեշտության մեծ ծավալի աշխատանքներ կատարելու, անհրաժեշտ իրեր, պարագաներ և սնունդ ձեռք բերելու համար: Կառավարության, ՏԿԵՆ-ի, պետական բոլոր գերատեսչությունների, Լոռու մարզպետի աշխատակազմի, ՆԳՆ Փրկարար ծառայության, Հարավկովկասյան երկաթուղու, միջազգային և տեղական կազմակերպությունների, պետական, համայնքային, մասնավոր մի շարք կառույցների, կամավորների և բարերարների համատեղ ջանքերով հնարավոր եղավ արդյունավետ կազմակերպել մարդկանց ապահով տարհանման, մաքրման և վերականգնողական ահռելի աշխատանքները: ՀՀ կառավարության կողմից ընդունված որոշումներով ֆինանսական փոխհատուցում է

կատ. Ռ.Սահակյան

հեռ. /0322/4-04-43

տրամադրվել բնակիչներին, փոխհատուցման մյուս շահառուների մասով գործընթացը շարունակվում է: Կառավարության օժանդակությամբ և միջազգային գործընկերների հետ համագործակցությամբ կառուցվել և կառուցվում են բարձր կրողունակությամբ ավտոմոբիլային երկաթբետոնե, ինչպես նաև հետիոտնային կամուրջներ: Աղետի գոտում կատարվել են գետերի հունների մաքրման աշխատանքներ:

4. Ջրհեղեղի հիմնական պատճառները եղել են տեղացած հորդառատ անձրևները, հեղեղումները,գարնանային ձնհալը:

Ստորագրող
ԱՐԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ
2003720081

2025-05-16 17:35:52 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

կատ. Ռ.Սահակյան

հեռ. /0322/4-04-43